ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

18.08.15 N ԱԶ/06.1/9620-15
Ձեր N _____

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր 2015 թվականի օգոստոսի 10-ի թիվ 257-6-ի գրության մեջ նշված հարցերի վերաբերյալ տեղեկացնում եմ.

Հարց 1. 2015 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ առողջապահության համակարգի ֆինանսական պորտալը ստեղծվել է՝ հանձինս ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության sha.am կայքէջի:

Հարց 2. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության sha.am կայքէջը ստեղծվել է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Հարց 3. Նշված կայքէջում առկա են հանրային օգտագործման համար նախատեսված տարաբնույթ հաշվետվությունների ստացման հնարավորություններ: Կայքէջը պարունակում է 2 մոդուլներ՝ «Հաշվետվողական համակարգեր» և «ԱՊՀՎԿ (ամբուլատոր պոլիկլինիկական հաշվետվական վերլուծական պորտալ)»:

Հաշվետվությունները կարող եք ստանալ մուտք գործելով sha.am, այնուհետև «Հաշվետվողական համակարգեր» բաժին, ընտրել հանրության համար պատուհանը, գրանցվել և ստանալ հաշվետվություններ:

Հաշվետվություններ կարող եք ստանալ նաև մուտք գործելով sha.am, ընտրել «ԱՊՀՎԿ» մոդուլը, այնուհետև «տվյալների համակարգ» բաժինը, ընտրել «հանրային հաշվետվություններ» բաժինը և ստանալ հաշվետվություններ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ ՀՀ ԱՆ պետական առողջապահական գործակալություն
Հեռ.: 010 65 46 91